

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Պոլիարիոյ համար Տարեկան 12 ֆր. » » Վեցամսեայ 6 ֆր. Արտասահմանի համար (երկու քիւր մեկ ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր. ԿԱՆԽԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ	Համակ դրամ եռայլն դրկել հետեւեալ հասցեով ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — Վ.Ա.Ռ.Ն.Ա. (Պուլկարիա) Редакция на ВѢСТНИКЪ „И р а в у н к ъ“ ВАРНА (България)	Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք էս չեն ընկալիր եւ յարմար դասուած- ները միայն կը հրատարակուին առ- նշտովին կամ մասամբ: Դասնունման տղը 20 սանթիմ. երե- սին աւելի անգամներու համար 20 0/0 գնել կը լինի:
--	---	--

ԵՐԱՎՈՒՆԿԻ

Ե. ՏԱՐԵՇԵՐՁԱՆԸ

Կ'սկսի յառաջիկայ Յունվար 1ին (1900)

Թերթիս ուղղութիւնը միշտ անփոփոխ պիտի պահուի. գնահա-
տում եւ քննադատում կատարեալ անկողմնակալ ոգով պիտի ըլլան, ինչ-
պէս եղած են ցարդ. Կարելի եղածին չափ պիտի խորշինք անհատական
եւ կուսակցական խնդիրներով պարզելէ եւ այդ ոգով եղած յարձակում.
ներու պատասխանելէ. բայց միեւնոյն ժամանակ չպիտի վարանինք հրապա-
րակաւ ձաղկելու ու մատնանիշ ընելու այն ամեն զիջումները, որոնք
ազդարարութեան դիմակով ի վնաս ազգին կը գործունին:

Խմբագրութիւնս նոր Տարեշրջանին մէջ Ազգային, Գաղաքական
եւ Երբեք լուրերու աւելի մեծ տեղ մը պիտի կրնայ տալ նոր կարգա-
դրութեանց շնորհիւ:

Իրաւունք-ի ծաւալը եւ բաժանորդագրութեան պայմանները
նոյն պիտի մնան:

Մեր արդի բաժանորդներէ զատ նոր բաժանորդագրուիլ փափա-
քողներ թող փութան իրենց հասցէն օր առաջ մեկ հաղորդել:

Ե. Շրջանի տարեկան բաժնեգինը կանխիկ վճարողները ընկալա-
գրին հետ մէյ մէկ Ընդարձակ Օրացոյց Խմբագրութենէն նուէր պիտի
ընդունին:

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Բաւական ժամանակէ ի վեր Ե-
գիպտոսի առաջնորդ ընտրելու
խնդիրը կը յուզուէր թէ՛ տեղ-
ւոյն ազգ. պաշտօնական շրջա-
նակներուն մէջ, թէ՛ ժողովուրդին,
թէ՛ հայ մամուլին մէջ եւ թէ՛ Պու-
սոյ Պատրիարքարանին շուրջը:
Գահիրէի Ազգ. Երեսփ. Ժողովը
քուէից բացարձակ առաւելու-
թեամբ առաջնորդ ընտրած էր
Ամին. Իզմիլեանը, որ Երուսա-
ղէմայ մենտորանին մէջ փոխանակ
անգագ փակուելու, իր ծանօթ
վարչագիտութեամբ փարուսն.
ներու երկրին ազգային գործերը
նախանձելի գրութեան մը վերա-
ծելու ամենէ աւելի յարմար եւ ա-
ռակ եկեղեցականն է: Գահիրէց.
ոց այս ընտրութիւնը շատ հա-
ճելի թուեցաւ Ազգ. քսանդրիացոց
եւս, որոնք Գահիրէի հետ շատ
խնդիրներու մէջ անհամաձայն
գտնուած են. բայց այդ ընտրութեան
մասնակցած չըլլալով հանգերձ
արդիւնքին համակրած էին. հե-
տեւորաւ Ս. Իզմիլեանի վերստին
Եգիպտոս մտնելով, նախ երկու
կարեւոր կեդրոններու միջեւ զո-
յւթիւն ունեցած անհամաձայնու-

թիւնը պիտի կրնար վերցնել, քա-
նի որ իր մասին համակրանքը
ընդհանուր էր:

Բայց դժբաղդութիւնը հոն ե-
ղաւ որ Օրմանեան անկեղծ կամք
ու մի քիչ քաջութիւն չունեցաւ
այդ պաշտօնի եկեղեցականը Ս.
Յակովբայ բանտէն ազատելու, ինչ
որ Եգիպտոսի հայ գաղթականու-
թեան շահը կը պահանջէր, եւ ինչ
որ օրէնքի տրամադրութիւնները
իր վրայ պարտք կը դնէին ու ժո-
ղովուրդի միահամուռ ձայնն ալ
այդ կը պնդէր:

Օրմանեան այդ բոլորը ոտքի
տակ առաւ եւ Իզմիլեանի ընտ-
րութեան տեղեկագիրը փոխանակ
վարչական խառն ժողովոյ սեղա-
նին վրայ դնելու Երւմըղ ներկա-
յացուց, ուրկէ այդ կեդրով բա-
ցատական պատասխան առնուելիքն
արդէն գիտէր: Ուստի ինք Ս.
Իզմիլեանի մասին լուռ մնալով
նոր ընտրելեաց ցանկ մը Եգիպ-
տոս զրկեց. ուր պաշտօնական
չըլնականներու եւ ժողովուրդի
մէջ բողոքոյ ձայններ բարձրացան
եւ հազարաւոր ստորագրութիւն-
ներ կրող հանրագրիւր Իզմիլեանի
առաջնորդութեան վաւերացումը
պահանջեցին: Սակայն այս ամէնը
օգուտ չունեցան Օրմանեանի խո-

րամանկութեան առջեւ. նա ջա-
նաց այսինչ փաշային, այսինչ
պէյին սիրտը առնել եւ վերջապէս
նոր ընտրութիւնը կատարել տալ:

Այս այսօր կիմանանք թէ Ե-
գիպտոսի Երեսփ. Ժողովը Առաջ-
նորդ ընտրած է Տ. Եզիլէ Եպիս-
կոպոս Դուրեանը, որ Արմաշու
Դպրեվանքին փոխ վանահայրն է,
եւ այդ ամենակարեւոր հաստատու-
թեան օգտակար ըլլալու միակ
ձիւքը ունեցող եկեղեցականն է
մեր մէջ. հոն Դուրեանի եպիսկ-
ազգին ապագայ եկեղեցականու-
թիւնը պատրաստելու բարձր կո-
չումը ունի: Եթէ ինք հեռանայ
այդ հաստատութենէն, այդ պաշ-
տօնին համար միեւնոյն հմուտ-
թիւնը ու ձիւքը ունեցող ո՞ր ե-
կեղեցականը պիտի յարգէ իրեն.
սա ամենակարեւոր հարց մըն է,
որ Եգիպտոսի առաջնորդական
խնդրէն աւելի մեծ կարեւորու-
թիւն ունի ընդհանուր տեսակէ-
տով: Անկէ զատ խնդիր է թէ
Դուրեանի եպիսկոպոս վարչական
փորձառութիւնն ունի՞: Մենք կը
կարծենք թէ իրեն այն յատկու-
թիւնը բաւականաչափ չէ, գոնէ
Եգիպտոսի համար:

Պէտք է զանազանել ուսուցչա-
կան հմտութիւնը վարչական փոր-
ձառութենէն, որ անհունապէս ի-
րարմէ կը տարբերին: Ըստ մեզ,
եթէ պէտք եղած չափով վարչա-
կան փորձառութիւնն ունեցած ալ
ըլլայ, ազգային ընդհանուր օ-
գուտը նկատի առնելով, Դուրեան
պէտք էր դեռ քանի մը տարի
Արմաշու վանքին մէջ մնար. իսկ
Եգիպտոսի կրնային իրենց եթէ
ոչ Իզմիլեանը գէթ ուրիշ եպիս-
կոպոս մը Առաջնորդ ունենայ,
որուն վարչական փորձառութիւնն
ալ խնդրոյ տակ չըլլար:

ԿՈՉ ՍԸ

Պուսոյ թղթաբեքը Խմբագրութեանս
բերած է հետեւեալ կոչը զոր նոյնու-
թեամբ կը հրատարակենք:

Պուսոյ եւ գաւառներու բանտե-
րէն ծայրայեղ թշուառութեան
սրտածմելի լուրեր կը հասնին. Ազ-
գին լաւագոյն բայց է՛ն դժբաղդ
զաւապներն են որ կը հեծեն հոն
զարհուրիլ տանջանքներով. իրենց
բարոյական ու ֆիզիքական տա-
ռապանքներուն կը միանայ նիւ-

թական ողբալի վիճակ մը: Հի-
ւանդ եւ անօթի անոնք զանդադ
ու ահաւոր մահուան մը ճանքան
բռնած են եւ մենք գիտենք որ ա-
նոնցմէ ոմանք մեռած են, լուռ
ու մունջ. բացարձակ լքման ու
մոռացութեան մէջ:

Այսօր մըն է որ մինչեւ հիմա
Հայ ժողովուրդը անհատական կամ
հաւաքական նախաձեռնութեամբ,
գաղափարը ունեցած չըլլայ օգ-
նութեան հասնելու մեր այդ դժ-
բաղդ եղբայրներուն, որոնք ամեն
բան զոհած են յաղթանակին հա-
մար նպատակին որ ամենուս իտէ-
ալն է:

Հայ ժողովուրդը իր բանտա-
կալներուն տառապանքը կը բաղ-
մապատկէ իր անտարբերութեամբ.
բը զանոնք անօթի ու մերկ թու-
լով. իր անհոգութեամբ անոնց
տալով ազգէն յեռաւ ու մոռցու-
ած ըլլալու ցաւը: որ ունշուշտ ա-
ւելի դառն է իրենց սրտին քան
նիւթական փանջանքները զոր կը
կրին:

Աններելի է որ անտարբերու-
թիւնը տիրէ այլ եւս:

«Հայկական Միութիւն»ը իրեն
նուիրական պարտք կը համարի
կոչում ընել բովանդակ հայութեան
օգնութեան հասնելու մեր բան-
տարկեալ ընկերներուն որոնցմէ մէ-
կէ աւելին անբաւական մտնողի
հետեւանօք թոքախտի ենթակայ
ըլլալով, մահուան նախընթաց օ-
րուան մէջ կը գտնուին եւ դիմում
կրնէ մասնաւորապէս Զիւր ազգա-
սիրական զգացումներուն Պարոն
Խմբագիր որ հրատարակէք այս
կոչը եւ Զիւր թերթին մէջ հանգա-
նակութիւն մը բանաք ի նպատակ
հայ բանտարկեալներուն:

«Հայկական Միութիւն» խըն-
դրանքին վրայ Բարիգաբնակ վա-
ճառական Պարոն Յ. Իսքէնտէր,
որ իր հայրենասիրական անկեղծ
զգացումներովը հանրածանօթ է,
հաճեցաւ, իրեն գանձապահ, ըն-
դունիլ բոլոր նուիրատուութիւննե-
րը որոնք Եւրոպայի եւ Ամերիկա-
յի հայ գաղթականութեանց կող-
մէն, ինչպէս նաեւ ուրիշ տեղերէ
պիտի զրկուին այդ նպատակով:

Հասցէն՝
Monsieur J. Iskender
36, Rue de la Tour-d'Auvergne, 36
«Հայկական Միութիւն»ը պիտի
հրապարակաւ ծանուցանէ, ման-
րամասն հաշիւներով, հանգանա-

կուլտան գոյացուցած գումարը և անոր ինչ կերպով նպատակին յատկացուիլը :

Հայ Յեղիափոխական Միոնքեան Կ. Պօղոսյ քովիքէի կողմէն

(կարմիր կնիք)

Կ. Պոլիս 1 յունիս 1900

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ
(ԿԱՐԱՊԵՏ ՊԻԼԷԶԻԿԱՆԱՆ)

Նոր ստացուած արտաստաման. եան թերթերէն ոմանք կը գու. ժեն ծանօթ հրապարակագիր եւ ջերմ հայրենասէր Տիգրան Երկաթ թի մահն, որ մեզ ազ ալ շատ ցաւ պատճառեց :

Իր բուն անունն էր Կարապետ Պիլէգրիկեան, բնիկ Պօլսեցի, հայ հռոմէական ծանօթ ընտանիքի մը զաւակը : Նա պզտիկ տարիքին մէջ Ֆրանսա զրկուած ըլլալով, իր կրթութիւնը ու դաստիարակու. թիւնը հոն ստացած էր . և հա. կառակ օտար շրջանակի մը մէջ ապրած ըլլալուն, ջերմ հայրենա. սէր մը եղաւ : Այս մի քանի տա. րեան մէջ ինպատ ազգին եղած շարժումներու առեւ իր կարեւոր դերը ունեցաւ իր համբաւաւոր գրչով և ճարտար բանաստեղծ. թիւներովը . որոնց չնորհիւ եւ. րոպական գրական պայքարէզին վրայ յաջողած էր յարմ տեղ մը բռնել . իր յօդուածները որ «Ռե. վիւ տէ Ռըվիւ» հանդէսին մէջ ստեղծ կ'ընելային, գլխաւորաբար Արեւելեան և Հայկական հարցե. րուն նուիրուած են :

Տիգրան Երկաթ իր այս վաղա. հաս մահովը մեծ բաց մը կը թո. ղու հայ երիտասարդութեան ըն. տրեալին պատուաբեր շրջանակին մէջ : ազգն լաւագոյն զաւակ մը կը կորսնցնէ, որով հայկական հար. ցը պատշաճօրէն Եւրոպայի ծանօ. թացնող անշահախնդիր կարեւոր դէմք մըն ալ կը պակսի :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (12)

ՆԵՏԱ

(ՄԱՍԻՍ ՊԱՏՄԱԾՐ)

Ե

Քարտաւարացիք, Սեպտեմբրեան Ռուսիոյ քաղաքի պիտի փութան. եւ հիստորիկ Մոսկովեցիք Անկիւսպիս պիտի երեւան :

Պուլկ. երգ :

Ծնունդին երկրորդ թէ երրորդ օրն էր, լաւ չեմ յիշեր, Մամիս հետ փո. ղոց ելանք ու գրան առջեւ աթոռակի վրայ նստանք : Կը նստէինք ու արեւ. քի ճառագայթներէնովը ջեռուէինք : Մեք ցեղը Սիւրա Բլանիւնաի գագա. թը կը գտնուի, ուստի եւ ձմեռը շատ ցոթաւ կըլլայ : Անանկ ձմեռներ ալ կը պատահին որ ամեն որ գիտը կը սառնի, եւ այս ցուրտը կը տեսէ ամբողջ երեք ամիս : Մեծ աղաները կոտորուին, ձեռ. քերտուին կը փչին, ընկող կը խաղան, կամ ձեռքով իրար կը ծեծեն : Իսկ ա. ւերի պղպիւնները ձիւներէ մէջ կը զո. րին, կը խնդան ու կը պոռան իրենց

ԿՍՐԵՈՅ ԿԱԽԱՂԱՆԻՆ ՎՐԱՅ

ԱԼԱՇԿԵՐՏՏԻ ԱՐԱՄ ԱՐԱՄԵՍԵԼԸ

— 10 —

«Զայն Հայրենեացին» արտաստուած

Լօվէլ, 3 դեկտ. 1899

Նպատակս չէ երբեք մեռածի մը անցեալ արարքը քննադատել : Հայրենիքի մէջ մօտէն ծանօթ և կովկասի մէջ գործակից ընկե. րոջս՝ Արամ Արամեանի մահուն գոյժը երբ ինձ հասաւ, խիստ յուզուեցայ, սրտագին լացի : Աչ. քիս առջեւ պատկերացած կը տես. նէի երեք անկենդան դիակներ, ողբացեալ խաչատուր կէրէկցեա. նինը կարնոյ դաշտին վրայ ար. ինչուայ փռուած, Տիգրան Ու. քունեան մը թիֆլիզի սալահա. տակներուն վրայ արինչաղախ և ասդին՝ Արամեան մը կարնոյ կա. խաղանէն անկենդան կախուած : Տխուր մտածութեանց մէջ խորա. սուզուած յակամայս ուշա անցելոյն կը վերադարձնեմ և կուզեմ քիչ մը յաշտտետրս պրպտել : Հոն սեւ գծերով արձանագրուած են հայա. կերներու վոհմակի մը տխուր սըլա. րագործութիւնները :

Ինչուստեանկան թուականներուն՝ դէպի ազգային իսկական գոր. ծիչները ատելութեան ու չար նա. խանձի ոգով լեցուած՝ չեզեւն մը կար կարնոյ մէջ . կարնեցին կ'ար. տասուէր, իր վիճակը սոսկալի գրութեան մը ենթարկուած էր : Այդ վիճակին ակնատեսս եղած էի ես ալ, այսօր յիշիցի զայն ու հառաչեցի, կը մտածէի թէ կէ. րէկցեանը անմահ նահատակ մըն է, իսկ Ուքունեանը, Արամը... Պահ մը խորհելէ վերջ՝ ըսի, թիֆ. լիպի Տիգրան Ուքունեանը եղեւ. նագործ մըն է, իսկ Ալաշկերտցի Արամ Արամեանը անգիտակից գործիք մը և դժբաղդ զոհ մը :

Արամ քանիցս խոստովանած էր ինձ Գէօրգիւ Գէօրգի մէջ իր սրտին խայթը և կօհնէր այն դաշտինը, որ Տ. Ուքունեանի կուրծ.

քը մտած էր : Ու կըսէր «դեռ մեր շատերուն տունը պիտի աւ. րեն անոնք» :

Արամ կը հալէր ու կը մաշէր Ալաշկերտի սիրովը, սակայն անհնար էր կարին մտնել, որովհետեւ թուրք կառավարութիւնը Արամը իրեւ մարդասպան մը կը փընտ. ուէր :

Արամ իր երկու ընկերներով թուրքաց սահմանին վրայ, Գէօր. քիւ քէօյի մէջ բռնուեցաւ իր ան. խոհեմութեան պատճառով, որուն մանրամասնութեան չիմ ուշեր մտնել :

«Դրօշակ»ի սեպտ. 1ի թիւը, որ առջեւս ունիմ, Արամի մէկ պատկերը կը կրէ կէս ու կիսկա. տար . կարգացի անոր կենսագրու. թիւնը, ուր իմիջի ալոց՝ հետեւ. եալ նշանակելի կէտը աչքիս ին. կաւ :

«Դաշնակցութեան կեդրոնը... համաժողովը չէր կէրէկցեանի դէմ արձակուած վճռին, և երբ չնա. յած կեդրոնի հակառակութեանը՝ կօմիտէն իրագործեց իր վճիռը» :

Ընկերական կեանքի մէջ եթէ կայ ազնիւ բան մը, ան ալ ճշ. մարտախօսութիւնն է . բայց ինչ ըսենք այնպիսիներուն, որոնք կուզեն մուրը իրենց երեսէն սրբել՝ ուրիշ մը աղարտելով : Եթէ թ. կէրէկցեանի մահուան պարագա. ներու քանի մը գծերը միայն հոս պարզենք, ընթերցողները պիտի հասկնան թէ «Դրօշակ»ը ինչպիսի ոլորուն ձեւերով կուզէ Դաշնակ. ցութեան պատմական սխաղոր. ծութիւններէն մին արդարացնել :

91ին կարինի մէջ թ. կէրէկ. ցեան բողոք բարձրացուց Դաշ. նակցական կօմիտէի դրամական ինչպէս նաեւ ուրիշ զեղծումներու դէմ : Թ. Ա. տաճիկ պաշտօնեայի մը հետ միացած՝ Դաշնակցու. թեան զէնքերը կը ծախեն : Ասոնց

այս վատ ընթացքին ամբողջ կոր. նեցին տեղեակ էր : Խնդիրը շատ յուզուեցաւ : Կէրէկցեանի կողմնա. կիցները թէեւ թուով քիչ, սա. կայն լուրջ հայրենասէրներ էին . ձեռքաւարութեան վախճալով աղ. մուկ չէին հաներ, մանաւանդ որ իրենց հակառակորդ ունէին Դաշ. նակցութեան զէնքերը ծախողնե. րուն գործակից փօլիս Ալի էֆ. անուն հրէշը : Կէրէկցեանը այս պիտով միեմակ էր թէեւ, սակայն ոգի իրօրին կուռեցաւ : Եւ ահա Դաշնակցութեան կեդրոնը լիազօր իրաւունքով սոյն խնդրոյն բնիշ զրկեց Ռուսաստանցի Տիգրանեան Տիգրան Ուքունեանը : Ուքունեան զեղծում գործողներու ճոխ խըն. ջոյքներէն շլացած և կոր գու. մար մըն ալ ժառանգելով՝ ուղեղ արդարացնել խաչազող զինու. վաճառները : (*) Այս վատերը վեր. ջապէս յաջողեցան իրենց միակ հակառակորդ հայրենասէր կէրէկ. ցեանի մահուան վճիռ տալ : Դեռ վճիռը չգործադրուած քանիցս զը. րուած էր Դաշնակցութեան խմբա. բակին, և ահա՝ պատասխան, որ խմբագրութեան կըստացուէր. «Մեր կողմէ Տ. Ուքունեանը լի. ազօր քննիչ կարգուած է» : Եւ Տ. Ուքունեանի վճիռն էր սպառ. նել կէրէկցեանը : Ահա այս էջեւ չեր Դաշնակցութեան կեդրոնի հակառակիւր :

Կէրէկցեան Արամի նեղու. թեամբ շարաչար ապանաեցաւ, որուն պատմութիւնը կը թողում յարմար առեւի մը : Կարճ ժամ. նակ յետոյ կէրէկցեանի եղբայրը թիֆլիզի հրապարակին վրայ, ա. զատ ու համարձակ, Դաշնակցու. թեան կեդրոնի ներկայացուցիչ Տ. Ուքունեանի գիտկը դետին փոխը դաշտին մը հարուածով : Հիմա ընթերցողը ինք թող ո. րոշէ թէ զոհն էր են թէ նահա. տակներ :

(*) ականջդ խօսի վարդօ :

բոլոր կողորդէն : Ստույցը հայելիի նը. ման կը շողայ գետին վրայ, կովերը կանգ կանուռն փողոցներէ մէջ, կը տաքնան արեւի տակ, կործան ու կը լղեն իրենց վտիտ սզները : Հիւրը իր քրդեղ սխարները կառնորդէ դէպի այն տեղը ուրկէ հողն ու արեւը մաքրած են ձիւնը, մեռած խոտի սա. ռած արմատիկներ կրծելու համար : Հնգկանն իր կարմիր գլխովը ու իր պարզած թեւերովն ու պոչովը, Տօս. քաթցի թիւքի նման, կը ճեմէ իր հարեւին մէջտեղ սւ կը գլղայ : Սագե. րըն ու բազրը աղբակոյտներու վրայ կը կենան, ու կը մրափեն : Հաւերը պատերաւն տակ հողը կը պոռեն ու քնացած որդեր կը փնտնեն . աքաղա. ղը ցանկապատին վրայ ելած է ու կար ձակէ իր երկար «կուկուլիկո»ն :

Փողոցը հաւաքուած են խուճ մը ազգիկ ու ման խաղալու ու զուարճա. նալու համար : Ուրախ գուարթ կը խօսակցին իրարի հետ այս մատաղ սիրտեր : Ընդհուպ պիտի սչի ազգա. լիս պարը, առանց՝ անոր ոչ մի Պուլ. կար : ոչ մի նորատի Պուլկախաչի կր. նայ ապրիլ : Նեղութիւն, հարստահա. րութիւն, արիւնխառն արցունք ու արիւնոտ քրտինք կը տիրէ ամեն տեղ

ու պարը դարձեալ կարեւոր տեղ մը պիտի բռնէ : Դիտե՞ք որ մենք շատ պարագաների մէջ անասունների կը նմանինք : Երբ խոզի մը խոճկորը յա. փշտակէք, նա կը հալածէ ձեզ կը խան է ու կը խածնէ . ալ նրբ անոր ձագը սպանէք նա կը հանդարտի կը մոռնայ իր տղան եւ վերստին հլու եւ հնա. զանդ կը զատնայ : Ես կը մտածեմ թէ երբ մարդ իր թշնամիներէ վրէժ լու. ծել չուզէր, ան՝ մարդ չէ :

Հաճոյք ու զուարճութիւն կըզգայ մարդ երբ նայի Պուլկար երիտասարդ. ներին . սիրելի է իրեն գիտել ալաւ. եան լեցուն ու բոլորով զէմքերը կար. միւր այտերը, սեւ ու փայլուն ծան. րը, որոնք հիւստ : ած են հիւսակներով եւ կը ծածանին ուսերին վրայ : Ինչ քաղցր է գիտել այդ սիրունիկ զուլա. ները, որոնք ծածկուած են զեղին, սպիտակ կամ կարմիր թաշկինակով : Ինչ հաճոյք է նայիլ այն զլիւն որ պճնուած է կամ գնուած ծաղիկով, ո. րովհետեւ ձմեռը պարտէզը բան մը չի բուսնիր : Վզին շուրջը կարգով շար. ուած են բուստ, մարգարիտ, կապու. ական ապակուլուք, դեղին դրամներ եւ ուրիշ տեսակ մանսակներ : Աւելի հարուստները խոշոր ոսկիներ ալ կը

կրեն : Պարեգօտը կապոյտ ու երկայն կը լինի . լանչանոցն եւ քէշերը կար. ուած են մետաքսէ տանթէլներ . իսկ պարեգօտին տակ՝ պարեգօտին տակ, ապակուլուքին տակ կը տեսնուի բարակ շապիկին մէջէն, ձիւնանման ձերմակ կուրծքը, որ մեռելին անգամ կրնայ յարութիւն առնել տար. կանջանոցը զարդարուած է տանթէլ. ներով . գօտին շատ անգամ ոսկեզօծ եւ լինի, իսկ կոճակներն արծաթէ : Պարեգօտին վրայէն կը հագնին չորխա. յէ թիկնոց, որ հիւսուած է աղու ետի. նիով, սամուրով, գայլենիով կամ գառ. նենիով, — ո՛ր տեսակէն որ ունենան : Ոտքերին կարմիր մուճակներ կամ թաշակայ հողաթափներ կը հագնին, սրունք անանկ մը բացուած են որ կը տեսնուին զոյգզոյցն գուլպաները : Իսկ մանչե՛րը . — Պալքանի մանչերը խոշոր բարձր ու երջանիկ են : Բողոքակ եւ առողջ դէմքեր . սեւ պիւներ ու փայ. լուն : Իրենց շապիկ վզի շուրջը ու կուրծքին վրայ բացուած է եւ ասոր եզրերը մանր ու ճերմակ տանթէլնե. րով կարուած են . իրենց զուլուր սեւ զառններէ գլխարկ ունին : Բաճկաւոր. նին մետաքսէ կամ բամբակէ : Այս բո. լորի վրայ կը կրեն կապոյտ չուլապի

կէրէկցիան կը մեռնի անիրա-
ւելիքն ու զեղծումի դէմ բողո-
քելուն համար, Ուրուսեան կըս-
պանուի եղբոր մը արգար վրէժ-
խնդ ութնակ դաշոյնէն, Արամ
տարազիր կըլլայ վատերու գոր-
ծիք ըլլալով, յետոյ կը բռնուի և
իրեն մարդասպան ու Դաշնակ-
ցութեան վաղեմի գործիչ, Կար-
նոյ կոմիտէի Առնապետ, հիմա
վատորդի մատնիչ և բարձրատի-
քեմ փոխ խնուսցի Տիգրանի
մատնութեամբ Արամը իբր ոճրա-
գործ կախազան կ'ըլլէ:

Եկեղեցաց Գոռքեմ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Բարիկ, 2 յունվար 1900

Նոր տարի, քե՛ Նոր դար
Եւրոպական համերաշխութիւնն
որ այնքան զովորանում է Դի-
ւանագէտներէն, մեկ նոր անհամա-
ձայնութեան մը օրինակը պիտի
տայ:

Երբ պիտի սկսի իր դարը:
1900 յունվար 1ին, թէ՛ 1901ի
յունվար մէկին: Գերմանիոյ Դաշ-
նակցական խորհուրդը առանց շատ
մտածելու, որոշեց ի Վիեննայ գալիս
սկսել 1900ի յունվար մէկին: Պա-
պն ալ իր կողմանէ հաշուած է ի
բոլոր ամենեցուն թէ թիւրք դա-
րու վախճանը 1899 զեկտ. 3ին է:

Միւս ժողովուրդներն թէպէտ
գեո այս խնդրով չեն զբաղած,
սակայն անով կը հետաքրքրուին:
Պապը և Դաշնակցական խորհուր-
դը շատ կուսակիցներ ունին մի-
ջիլ ամեն տեղ, Եւ արդէն բանա-
տեղծներն ալ անոնց կողմէն են:
Բանաստեղծներն. ահա մօքդիկ
այդ փշոտ խնդիրներն լուծելու
համար: Այս թուի և չափի խըն-
դիրներուն մէջ, ոտքերն և վանկե-
րն չափելու սովորութիւնն, բանաս-
տեղծներուն բացարձակ առաւել-

լութիւն մը կ'աւտայ:

Վիկթոր Հիւկո որ ծնած է 1802
փետրվարին, իր գաղափարն յայտ-
նած է հետեւեալ կերպով, իր
Պղանտին մէջ ծնին մեզ պատմե-
լով: (Այս Դարը երկու տարեկան էր,
Հոռոմ Սպարդակի կը յաջորդէր):

Ուրեմն եթէ 1802 փետրուարին
դարը երկու տարեկան էր, ըսել է
թէ դարը սկսած էր 1800ի յուն-
վարի մէկին:

Յիւստասի արդի երեւելի բանաս-
տեղծներէ մին Պ. տը Հէրէտիա
որ Յիւստասի Արագեմիային ան-
գամ և Լը Ժուանայ թերթին Տը-
նորէն էր, գաղափարակից է Վիք-
թոր Հիւկոյ: Ուրեմն Պ. տը Հէ-
րէտիա եւս կը հաւատայ որ 1900
թուականը իր դարը կը սկսի:

Սակայն այս բարձր և բազմա-
թիւ հեղինակութիւններէն չվախ-
նանք:

Խնդիրը կարծեալ չափ աւել-
լի պարզ է և անոր պէտք եղածին
պէս պատասխանելու համար բա-
ւական է հարցնել թէ տաս թիւը
քանի՞ միութիւններէ բաղկացած է
իննէ՞ թէ տասնէ՞, և հարկուր
բաղկացած է 90 միութիւններէ՞ թէ
99 առաւել 1 թիւերէ: Եթէ ամեն
քին համար յայտնի է թէ տասը
թիւը կը պարունակէ իր մէջ 10
միութիւններ և ոչ 9ը և թէ 100ը
հարկուր միութիւններ կը պարունակէ
իր մէջ և ոչ թէ 99ը, պէտք է
ուրեմն որոշել և պարզել թէ դա-
րն հարկուր տարի կը պարունակէ
և ուստի 1900ը թիւ դարու վեր-
ջին տարին է և ոչ ի դարու ա-
ռաջին տարին:

Որչափ որ աննշան կը թուի
խնդիրն, նա իր կարեւորութիւնն
ունի, վասնզի եթէ Գերմանիա իր
որոշման մէջ հաստատ մնայ, ան-
համաձայնութեան նոր պատճառ մը
պիտի ծագեցնէ միջազգային հա-
շիւներու մէջ. մինչ կը խօսուի ռու-

սագոյն պարզութեան մը և միա-
կերպութեան մը վրայ: Թիւրա-
ւուս կառավարութիւնը, միտք
ունի կըսեն, Յուլիական տոմարը
թողու և Գրիգորեանն ընդունելու:
Վերջապէս ինչ և է իցէ մենք կը
շնորհաւորենք Նոր տարին» և ոչ
թէ Նոր դարը:

Պօեթները ինչպէս կ'աւանդանան
Երբ երիտասարդ Պօէթը մը ա-
մուսնանալու տարիքին կը հաս-
նի, կըսկսի կին մը փնտռել: Նա
ցանկ մը կը պատրաստէ տեսած և
իրեն հաճելի երեւցած աղջիկնե-
րուն, ըստ անոնց արժանաւորու-
թեան: Յետոյ իր գլխարկին փե-
տուր մը դնելով, ձի կը հեծնայ
և դաշտ կ'ելլէ, կերթայ ամենա-
շատ բաղձացած աղջկան դուռը
կը զարնէ, հետը տանելով մոմ մը
աղջկան համար և տուի մը չոր
սալոր աղջկայ մօր համար: Պօէթ-
ներն գիտեն թէ ինչ կը նշանակէ
այս աշխարհական այցելութիւնն.
եթէ մոմը անմիջապէս վառուի,
ըսել է թէ նշանաւորութիւնն եղած
է, ապա թէ ոչ ձիաւորը մերժու-
ած է: Վերջին պարագային Պօէթը
երիտասարդը դարձեալ ձի կը
հեծնէ ու կերթայ նոյն կերպով
ներկայանալ երկրորդ, երրորդ ևն.
թիւերը կրող աղջիկներու տունն,
մինչև որ իր մոմը վառեն:

Ա. Սիւսի և Մ. Դաւիթ-Բեկ

ԼՐԱՔԱՂ

Կիլիկիոյ զանազան թեմերէն
Պատրիարքարան հասած գրու-
թիւններ նոր կրօնափոխութեան
դէպքեր կ'իմացնեն:

Նոյնպէս ալ Սիսէն Տ. Եղ-
նիկ քէն, Թուր-Սարգսեան Պոլ-
սոյ կրօնական ժողովին յատուկ
գրով մը յայտարարած է որ ձէ-

ձեզ, ուրուականի եւ օձերին պէս:
Եւ Լուսինը կանցնի կերթայ: Չարա-
սիրտ այլի թագուհին ուղեց Լուսինէն
վրէժ լուծել զինք անիծելուն համար,
և յարմար առնել կըսպասէր: Անգամ
մը Լուսինը երկրի մօտէն կանցնէր.
Թագուհին տան առջև կուգայ կը կե-
նայ, Երբ թագուհին կը տեսնէ Լու-
սինը, աղաղակ լալ մը կ'առնէ ու կը
ծածկէ զայն: Այն ատենէն ի վեր Լու-
սինն այնքան վեր կը բարձրանայ ինչ-
պէս այսօր կը տեսնենք եւ կանխէ
թագուհին որ օձ լինի: Օձերն ալ այն
ատենէն երեւան եկեր են: Մայրն ու
որդին միասին կապրէին ուրիշ օձեր
ալ չենք եւս չափ մարդիկ կերեր են:
Ասեմք ամբողջ աշխարհը պիտի ուտէ-
ին քայց Ա. Գէորգը կըսպաննէ մայ-
րը ու Սուրբ Թորոս որդին: Հիմա եր-
կիւս վրայ գտնուող օձերը անոնց թու-
նելն են: Ահա թէ ինչու այս տեղը
Օձամայր կը կոչուի. հոս ծնած են ա-
ռաջին օձերը:

— Բայց ինչ եղաւ նշան, մամիկ,
արցուցի:

— Եթէ խելօք նստիս եւ եթէ աղա-
ներին քով չերթաս ձիւնի վրայ պո-
թու, կը պատմեմ քեզի, ըսաւ մա-
միկ:

պէլի Պէրէքէթի շրջակայքերը Օ-
մանիյէ և Ճէպէլ կոչուած տեղե-
րու ազգայինք անհովիւ մնացած
ըլլալով դաւանափոխ կըլլան և թէ
կեկեղեցիներէ շատերը չունին պէտք
եղած գերքերը:

— Գիր. Տ. Եղիշէ եպիսկ. Դաւ-
եան Եպիսկոպոսի Առաջնորդ ընտ-
րուած է. ու այս առթիւ Եպիս-
կոսի Գաւառական Ժողովոյ Ատե-
նապետ Տիգրան փաշա Ապրո մաս-
նաւոր հեռագրով շնորհաւորած է
Նորին Գերապատուութիւնը:

— Բարերգէն նոյ. 26 թուական.
նով Բիւզանդիոնի ուղղուած նաչ
մակէ մը կիմացուի որ տեղւոյն
Հայ և Յոյն քահանաները անխա-
րաբար մասնակցած են երկու
նշնեցեալներու յուղարկաւորու-
թեան. հայ քահանան երգեցիկ
աղաներով ստէպ կը մասնակցի
Յոյն նշնեցեալին յուղարկաւորու-
թեան. Յոյն քահանան ալ կը
մասնակցի Հայ նշնեցեալին արա-
րողութեանց և Աւետարան կ'իւար-
դան:

— Խարբերդէն բաւական թուով
աղջիկներ Ամերիկա կը գաղթեն
ամուսնանալու համար:

— «Չայն Հայրենեաց» է կը տե-
ղեկանանք թէ Ամերիկայի Քրիստի-
տէնս քաղաքին մէջ հայ տիկին-
ներէ Որբախնամ ընկերութիւն մը
կազմուած է:

— «Հայրենիք» թերթի վարչութիւ-
նը ամերիկայէ հետեւեալ ծանուցումը
գրկած է մզկ ի հրատարակութիւն.

Յաւօք սրտի կը ծանցցանենք
թէ, այն շէնքը. ուր «Հայրենիք»
կը հրատարակուէր, անցեալ գիշեր
հրոյ ճարակ եղաւ:

Վարչութիւնը կարելի եղածին
չափ շուտով պիտի հրատարակեն
թերթը:

Մեր բաժանորդները կրնան ա-
պահով ըլլալ զի «Հայրենիք» ապա-
հովադրուած էր:

Վարչութիւն «Հայրենիքի»
99 գեկտ. 13

Մեր առժամեայ հասցէն է՝
The Hayrenik
458 3rd Ave., New York City.

— Չպիտի գործի միւսի վրայ, դուն
միայն ինծի պատմէ, ես խելօք կը կե-
նամ:

— Եթէ այսպէս է, մտիկ ըրէ, նե-
տա մեծ նեղութիւններ կրեց, նա հի-
մա երկինքն է:

Ե.

Միկն պզտիկ և վիշապը,
Եկե՛ք շուտով հաւաքուինք,
Ոտով ջարքենք գլուխը,
Ու վերջապէս ազատուինք
Պուլի, հրգ:

Մամս պահ մը լուեց, դուրսը շարժեց
ու սկսաւ պատմել այսպէս:

(Շարունակելի)

Թիկնոց, որ տակէն հիւստեւած է աղ-
ջիկներէ ու կիկներէ թիկնոցի նման,
բայց առանց տանիթէլի: Մուկկերին
սակ կախուած են կարմիր մետաքսէ
հանգրցներ, ու մէջքերին բարակ
դաշիով պատած են: Եւ այսպէս տը-
ղաները կը հաւաքուին փողոցը եւ կայ-
սանիին կը սպասեն: Այնքը կը կենան
ծխափայտ ի ձեռին եւ կը պատրաս-
տուին զխելու. իսկ կիկները սողո-
ռած են նայելու եւ յիշելու համար
իրենց երկրպագութեան տարիները:
Ձիւնն ալ վերցած է դաշտէն որ կը
կոչուի «Օձամայր»:

— Մամս, ինչու դաշտավայրը Օ-
ձամայր կը կոչուի, հարցուցի ես:

— Միթէ դեռ չի՞մ պատմած քեզի,
ըսաւ մամս զարմանօք, կարծես թէ կը
հարցնէի իրեն ով է մայրաւ:

— Չես պատմած:

— Այսպէղ ժամանակ մը թագաւորի
ուն կայ եղբոր, որի մէջ կապրէր

Պուլիկար թագաւորի մը այրին: Այս
կինը յոյն էր եւ շատ չար, ինչպէս են
աշխարհի բոլոր թագուհիները: Ամու-
սինի մահէն ետք թագուհին խիստ գէշ
կապրէր եւ ուրուականի մը հետ արու-
զաւան մը կը ծնի: Այս աղայ այնքան
չար էր որ մայրն իսկ կը գերազանցէր:
Այս թագաւորիկ իրենց քովէն անցնող
առնան անձի կը հայհոյէր, հանգիստ չէր
տար ոչ ձերբերին եւ ոչ մութացկանե-
րին: Վերջապէս այս աղան սկսաւ իր
մայրն ալ թնշամանել: Անգամ մը մայ-
րը բակը արած էր զայն, աղան հար-
ցուց. «Արդեօք մայրիկ, լուսինը կը
լսէ երբ ես կը նստաւսեմ քեզ եւ ու-
րիշ մարդիկ»: Այդ միջոցին Լուսինը
գետնի մօտէն կերթար — ձեռքով իսկ
մարդ կրնար հասնել եւ բռնել: Լու-
սինն երբեմն բողբոջին գետնին վրա-
յէն կերթար: «Թո՛ղ լսէ, կըսէ մայրը,
ի՞նչ հոգ քեզի լուսինէն»: — Բայց ե-
թէ սրբողի մեղի կըսէ թագաւորիկը:
— Թող սրբողի, կըսէ մայրը: Այս մի-
ջոցին Լուսինը անոնց քովէն կանց-
նէր, անոնց խօսածը կը լսէ ու կըսէ.
«Ա՛հ զգուշի աբարածներ, Աստուած եր-
բէք բարիք չտայ ձեզի: Թող ասկէ
վերջ ամեն մարդ փախչի ձեռնէ ու ասէ

ԵՆՆԻ ՍԵՆԵ

— 0 —

Ինչպիսի նոսրացում է կապիտալիզմը...

Եննի սենե իշխան իրաւունքաւ...

ՍԻՒԹԵՆԵՎԱԿՅԵ

Բարանըն միւստեանի իւր պուն...

Թիֆլիստէ դայէթ պէոյիւք...

Խարապ օլան քէոյլէր էհալի...

Իթալիատա Ամալթի շէհրին...

Վուզուլաթ կիւնիւ էօյլէնտէն...

Ճէնուպի Աֆրիգա ինկիլիզ...

Ինչպիսի կիւրէլէրի հաղըրայան...

«Յօլքս-Չայթունկ» նամ Ալ...

Հինտիստանտա՝ զըթըզտան...

Օտէստան վերիլէն պիր թէ...

Պունտան մաստա Օտէստա...

ԱԼՄԱՆԻԱ. — Եննի ասրա...

Իմերաթօր օրտունըն թէշթի...

ԲԱՆԱՍԱՍ պողաղըն աշմադ...

ԻնկիլթէրԱ վէ ՅՐԱՆՍԱ...

գարչը մուհաֆաղա իթմէկէ վա...

ՄՈՒՀԱՐԵՊԷ

Մուհարէպէ հազգընտայ վերի...

Պօէրլէր Մօլթէնօյը դայէթ...

Շէնէրալ Յրէնզէ ենիտէն մու...

Թէշթի Թէշթի Թէշթի Թէշթի...

Պաղը կաղէթալարըն եաղ...

ԹԻԻՐԲԻԱ ՀԱՎԱՏԻՍԱԹԸ

Սթանպուլտան դեկտ. 29 թա...

Մապէյին հաֆիլէրինին ար...

Պու կիւրէլէրտէ Սթանպուլտ...

Թէվզիթ օլունանլար ճէնուպի...

— Երւրդուտ Տամատ Մահմա...

ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ՄՈՒՐԶԱՎԸ

ՀԱՆԳ. ՏԻՐԱՆ ՄԱՆԱՎԱՆԱՆ

Նոր լոյս տեսած այս թատեր...

Ֆին 1 Ֆրանք. կեդրոնատեղին...

— 0 —

Սեփասարի գաւառէն, Տարէնտէր...

ՄԵՏ Վ ԻՃԱՆԱՀԱՆՈՒԹԻՒՆ



ՍՈՍԻԱԼ ՔԱՂԱՔԻ

ՊՈՒԼԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԵՆ ԵՐԱՇԽԱՌԵԱՒԱ...

Table with 4 columns: Կէս, Քառորդ, Մէկ ութերդ, Գումար

— 0 —

ՏՊԱՐԱՆ «ԻՐԱՒՈՒՆՔ»

Գրքեր, տետրակներ, հրատարակ...

Отговорникъ Н. Драгулевъ Печ. „Взаимность“ — Варна